ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ԲՈՂՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԺԲ ԴԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կոմնենոսների հարստությունը իշխանության գլուխ եկավ ԺԱ դարի 80-ական թթ., Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո, ճակատագրական այն իրադարձությունների պահին, երբ Սելջուկ թյուրքերը նվաճեցին Բյուզանդական կայսրության արևելյան նահանգները և մոտեցան Կոստանդնուպոլսին[1]: Սելջուկները տեր դարձան Հայաստանին և մխրճվելով կայսրության ներքին գավառները, իրենց իշխանությունը տարածեցին Փոքր Ասիայի մեծագույն մասի վրա, մտնելով անգամ թերակղզու ծայր արևմուտքում գտնվող Նիկիա քաղաք: Հարստության առաջին գահակալը՝ Ալեքս Ա Կոմնենոսը (1081-1118) փորձ կատարեց համախմբել Բյուզանդական կայսրության բոլոր ներքին և արտաքին ուժերը, հակահարված տալու համար արևելքից ներխուժած սելջուկներին, Սիցիլիայից կայսրության տարածքներ թափանցած նորմաններին և Բալկանների հյուսիսից կայսրության սահմանները մուտք գործած և թերակղզին ասպատակող պեչենեգներին: Կոմնենոսները Բյուզանդական կայսրության գահին բազմեցին շուրջ մեկ հարյուրամյակ:

Արտաքին թշնամիներից, հատկապես Փոքր Ասիա ներխուժած սելջուկներին հակահարված տալու համար, Ալեքս Ա Կոմնենոսը օգնություն խնդրեց Եվրոպայից[2]: Հռոմի պապ Ուրբան Բ-ը Կլերմոնի ժողովում Խաչակրաց ռազմարշավ հայտարարեց ընդդեմ արևելքի մուսուլմանների և Երուսաղեմը գրավելու կոչով դիմեց Արևմտյան Եվրոպայի բնակչությանն ու պետություններին[3]: Կոմնենոս հարստության կայսրերը փորձեցին օգտվել առաջին խաչակրաց արշավանքի ժամանակ Մերձավոր Արևելքում ստեղծված բարենպաստ իրադրությունից, իրենց վերահսկողության տակ առնելու համար սելջուկյան ռազմարշավների ընթացքում կորցրած տարածքները, սակայն այդ մտահաղացումը նրանց հաջողվեց իրականացնել մասամբ: Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասո-

ղիքում ստեղծված իրավիճակը անհանգստացնում էր Կոմնենոսներին, որոնք այդ տարածքներն համարում էին կայսրության սեփականություն, իսկ դրանց վրա ստեղծված իշխանություններին ստիպում էին վասալական երդում տալ Բյուզանդական կայսրությանը: Այդ էր պատճառը, որ կայսրությունը ԺԲ դարի ընթացքում սկսեց ուղիներ փնտրել վերադարձնելու փոքրասիական և հյուսիսասորիքյան տարածքները: 1097/8 թ. Ալեքս Ա-ը Բյուզանդական կայսրության իշխանությունը վերահաստատեց Փոքր Ասիայի արևմտյան հատվածում (Նիկիա, Զմյուռնիա, Եփեսոս, Սարդիկե, Ֆիլադելֆիա և այլուր): Պետության առաջնակարգ նպատակներից էր տեր դառնալ Փոքր Ասիայի մերձավոր շրջաններին և թույլ չտալ սելջուկներին իրենց տիրապետությունը հաստատել ծովում: Այս խնդրում կայսրությանը անգնահատելի օգնություն կարող էր ցույց տալ հայկական ազգաբնակչությունը Մերձավոր Արևելքի և Բալկաններին մի նշանակալի հատվածում ստեղծած իր քաղաքական և եկեղեցական կառույցներով, սակայն բյուզանդական գաղափարախոսության տվյալ դարաշրջանի արտաքին քաղաքականության հիմնադրույթներից մեկն էլ այն էր, որ հայերը թյուրքերի հետ դաշնակցած Բյուզանդիային դուրս են վռնդել իր սեփական տարածքներից[4]: Այդ հիմնադրույթից ելնելով Բյուզանդական կայսրությունը Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանությունների նկատմամբ անհաշտ դիրք էր գրավել: ԺԲ դարի ընթացքում Կոմնենոսների արևելյան քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը դարձավ փոխհարաբերությունների ճշգրտումը և բարելավումը տարածաշրջանի հայկական իշխանությունների և Հայոց եկեղեցական կազմակերպության հետ:

Ինչ վերաբերում է Սելջուկյան ռազմարշավներից հետո Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական իշխանություններին, ապա նրանց հիմնական մասը (Փիլարտոս, Խաչատուր, Դոդ Վասիլ, Ռուբինյաններ և ուրիշներ) իրենց համարում էին Բյուզանդական կայսրության ստորականեր, քանի որ իրենք եղել էին բյուզանդական բանակի հրամանատարներ: Պարզապես նրանք օգտագործել էին առիթը անկախություն ձեռք բերելու և տարածաշրջանում իրենց իշխանությունը հզորացնելու, քաղաքական պայքարում հաճախակի շփվելով Սելջուկ սուլթանությանը ենթակա պետական միավորների հետ: Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությունը պայմանավորող գործոններից էր դառնում հետզհետե ԺԲ դարի սկզբում Քեսունի Կարմիր վանքում հաստատված, և նույն դարի 40-ական թթ. Հռոմկլա տեղափոխված Հայոց կաթողիկոսարանը: Կոմնենոս կայսրերի իշխանության տարիներին Հայոց կաթողիկոսական գահին մեկը մյուսին հաջորդելով բազմում էին Պահլավունի իշխանական տնից սերող գահակալներ, որոնք հսկայակա ջանքեր էին թափում նորմալացնելու համար Հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունները Բյուզանդական կայսրութ-

յան և մերձավոր Արևելքի մյուս քույր եկեղեցիների հետ: Հայտնի է Գրիգոր Բ և հաջորդ, մանավանդ Գրիգոր Գ և Ներսես Դ կաթողիկոսների գործունեությունը ի նպաստ հունական մատենագրական հուշարձանների հայերեն թարգմանության: Նրանք առիթը բաց չէին թողնում շփվելու կայսրության ուսումնական կենտրոնների և վանական հաստատությունների հետ: Այս առումով, իհարկե հստկանշական է Գրիգոր Բ Վկայասերի գործունեությունը, որը կաթողիկոսական իշխանությունը ստանձնելուց առաջ պաշտոններ էր վարել կայսրության արևելյան սահմանների աշխարհիկ կառույցներում: Այցելելով Կոստանդնուպոլիս, նա փորձել է հավանաբար մեղմացնել ահագնացող հակակրանքը հայոց և հունաց եկեղեցիների միջև[5]:

Այեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունները հեռու էին բարեկամական համարվելուց: Այդ է վկայում Ալեքս Ա Կոմնենոսի դավանաբանական ճառը, ուր հեղինակն անդրադառնում է Հայոց եկեղեցու մոլորություններին[6]: Բյուզանդական կայսրությունը, նախորդ կայսրերի օրոք, ԺԱ դարի ընթացքում, օգտագործել էր իր բոլոր հնարավորությունները Հայոց կաթողիկոսական աթոռը մայրաքաղաք Անիից դուրս բերելու համար: Վերացներով Բագրատունիների Հայոց թագավորությունը, Բյուզանդիան բռնի ուժով ստիպել էր Անիի կաթողիկոսարանը լքել Պետրոս Գետադարձ և Խաչիկ Բ Անեցի հայրապետներին, իսկ վերջինիս մահից հետո, ամեն կերպ խոչնդոտել էր Լուսավորչի աթոռի նոր գահակալի ընտրությունը և ձեռնադրությունը[7]: Բյուզանդական եկեղեցին Ժ դարից պետական քաղաքականություն դարձրած կրկնամկրտությունների միջոցով փաստորեն իրենից վանում էր Հայոց եկեղեցական կազմակերպությունը: Այս իրադարձությունները իրենց հետքն են թողել ԺԲ դարի հայ պատմագրության վրա և բուն Հայաստանի հոգևոր եկեղեցական շրջաններում, կասկածի ենթարկելու համար բյուզանդական կողմի յուրաքանչյուր միութենական նախաձեռնություն:

Բյուզանդական հոգևորականությունը շարունակելով նախորդ դարերի ավանդները, ԺԱ դարում անհանդուրժողական դիրք էր գրավել Հայոց եկեղեցու նկատմամբ: Այդ մասին է վկայում 1087 թ. Նեղոս Կալաբրացի վանականի դեմ սկսված դավանաբանական դատավարությունը, որի կապակցությամբ հիշատակվում են նրա համախոհներ Տիգրանի և Արշակի անունները[8]:

Բյուզանդական աստվածաբանները Հայոց եկեղեցու հետևորդներից պահանջում էին ընդունել Քաղկեդոնի և նրան հետևող բոլոր եկեղեցական ժողովների դավանաբանական և կարգապահական որոշումները, ծիսական հարցերում հետևել Կոստանդնուպոլսի եկեղեցուն և ենթարկվել բյուզանդական եկեղեցական կազմակերպությանը: Հեշտ է նշմարել բյուզանդական քաղաքական շահերի առկայությունը այդ պահանջնե-

ղում: Դարերի ընթացքում իր պատմությունը մաքառումով կերտած Հայոց եկեղեցուց պահանջվում էր հրաժարվել դարավոր եկեղեցական ավանդույթներից ե դառնալ Բյուզանդական կայսրության և նրա եկեղեցու կամակատարը: Այս մոտեցումը երբեք ընդունելի չէր կարող լինել Հայոց եկեղեցու համար, որը դարերի ընթացքում կերտել էր սեփական ինքնուրույնությունը:

Այդ պայքարի ընթացքում, սկսած Զ դարից, Հայաստանում միմյանց դեմ էին պայքարում քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հոսանքները: Բյուզանդական տիրապետության տակ գտնվող հայաբնակ տարածքներում քաղկեդոնական բնակչությունը բավական ծանրակշիռ դիրք ուներ, քանի որ վայելում էր կայսրության հովանավորությունը: Քաղկեդոնականների եկեղեցական կազմակերպությունը շարունակում էր մասը կազմել բյուզանդական կայսերական եկեղեցու և մասնակցում էր նրա բոլոր ժողովներին, անհաշտ պայքար մղելով Հայոց ինքնուրույն կաթողիկոսության հետ: Դավանաբանական հողի վրա տեղի էին ունենում նաև ազգային հակամարտություններ: Տայքի և Գուգարքի քաղկեդոնական բնակչության մի նշանակալի հատված, իր դավանական ինքնատիպությունը պահպանելու և Հայոց եկեղեցուց առանձնանալու շնորհիվ սկսած Է դարից փոխում էր ազգային դեմքը: Հայոց եկեղեցու ե քաղկեդոնականների միջև պայքարն ավելի էր սրվում ԺԲ դարի ընթացքում, Վրաստանի հզորացմամբ: Պաշտոնական եկեղեցին թշնամաբար էր վերաբերում հայ հոգևորականությանը, խլում էր եկեղեցական շինությունները (Պոնձահանք, Անիի տաճար և այլն): Այդ պատճառով էլ, Վրաց թագավորության տարածքներում գործող Հյուսիսային Հայաստանի հոգևորականության դիրքորոշումը հակադարձ էր ԺԲ դարի Կիլիկյան հոգևորականության միութենական ձգտումներին:

Հայոց եկեղեցու առաջնորդները մերժում էին Հայոց եկեղեցու ինքնուրույնության վերացման ամեն մի փորձ և սկսած Ը դարից որդեգրեցին հակաքաղկեդոնական ավանդույթների ամրապնդման անխոտոր կուրս: Այդ պատճառով էլ, Բյուզանդական կայսրության սահմաններում Հայոց եկեղեցին շարունակում էր մնալ հալածյալ դավանանքների շարքում: Կայսրության տարածքներում բյուզանդական եկեղեցին առավելագույնս անհանդուրժող էր այլ դավանական խմբերի, Հայոց ինքնուրույն եկեղեցու նկատմամբ: Բյուզանդական բանակում արգելված էր այլադավանների զինվորական ծառայությունը: Կենսագործունեության այդ բնագավառն ընտրողները ստիպված էին վերամկրտվել կամ փոխել դավանությունը: ԺԲ դարի Կոմնենոսների դարաշրջանի պատմագրությունը, որը շարունակում էր բյուզանդական մատենագրության լավագույն ավանդույթները, գաղափարախոսական միտումներից դրդված չէր ուզում էական տարբերություն տեսնել պավլիկյանների, հուսկոբիկյանների և հայոց եկեղեցուն պատկանող հավատացյալ ներկայացուցիչների

միջև: Այդ դիրքորոշման բացահայտման լավագույն վկայությունը Ալեքս Ա-ի դուստր՝ Աննա Կոմնենեի երկն է, ուր նկարագրվում է 1114/1115թթ. Փիլիպուպոլսի հերձվածողների դեմ Ալեքս Ա Կոմնենոսի սկսած դատավարությունը[9]: Բյուզանդական եկեղեցին շարունակում էր վաղուց ի վեր սրբեգրած, Հայոց եկեղեցու հավատացյալներին վերամկրտելու քաղաքականությունը[10]: Այս առումով, Աննա Կոմնենեի պատմության հետ միասին բացառիկ վկայություններ է հաղորդում Թեոֆիլակտ Օխրիդացին իր թղթերում[11]: Դավանաբանական խնդիրների արծարծմամբ ևս բյուզանդական եկեղեցու ներսում գրված աշխատությունները շարունակում էին նույն ուղղությունը, ինչ դրանք ունեին մի քանի դար առաջ[12]: Դրանց մեջ կարևոր նշանակություն ունեն ԺԱ դարի վերջում գրված Եվթիմիոս Զիգաբենոսի «Πανοπλία δογματική» աշխատությունը և նրա հիմնական դրույթները պաշտպանող, ԺԳ դարի սկզբին գրված Նիկետաս Խոնիատեսի "Θησαυρὸς τῆς ὀρθοδοξίας» դավանաբանական երկը[13]: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ԺԲ դարի ընթացքում Հայոց եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը Բյուզանդական կայսրության ներսում փոփոխության չէր ենթարկվել, չնայած գրեթե 20 տարի (1165-1178թթ.) շարունակ բանակցություններ էին տեղի ունեցել կողմերի միջև: Դրա ամենավառ ապացույցն էր Իսահակ Անգելոս կայսեր իշխանության տարիներին (1185-1195) Հայոց եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ Բյուզանդիայում, հատկապես Փիլիպուպոլսի շրջանում իրականացվող հալածանքները և վերամկրտության փաստերը, որոնց մասին հաղորդում են թե՛ հունական, թե՛ հայկական սկզբնաղբյուրները[14]:

Հայոց եկեղեցու և կաթողիկոսական աթոռի նկատմամբ նման վերաբերմունքն ուներ իր քաղաքական դրդապատճառները: Վերացված Հայոց թագավորության պայմաններում կայսրությունը փորձում էր կոտրել Հայոց եկեղեցական կառույցի դիմադրությունը, որի շնորհիվ ավելի հեշտ կլիներ իր իշխանությունը տարածել կայսրության ներսի և նրա սահմանների շուրջ հաստատված հայաբնակ շրջանների վրա:

Բյուզանդական կայսրությունը սելջուկյան ռազմարշավների պատճառով ետ էր մղվել Հայաստանից, Հյուսիսային Ասորիքից և Փոքր Ասիայի մեծագույն մասից: Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին Բյուզանդական կայսրության տարածքում, հատկապես Բալկաններում հայ ազգաբնակչության նկատմամբ հալածանքների մի քանի հզոր ալիք էր անցել: Աննա Կոմնենեն բավական մանրամասն անդրադառնում է այդ իրադարձություններին: Միաժամանակ կապված Ա խաչակրաց ռազմարշավի հետ, Բյուզանդական կայսրությունը երկարատև ընդմիջումից հետո, ԺԲ դարի սկզբին, բավական աշխուժացրեց իր քաղաքականությունը Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում: Բյուզանդական բանակները խաչակիրներին ուղեկցելով հասան մինչև Անտիոք, փորձելով իրենց վերահսկողության տակ առնել տարածաշրջանը: Խա-

չակրաց առաջին ռազմարշավին հաջորդած առաջին տարիները ևս - Մատթեոս Ուռհայեցու կողմից բնութագրվում են իբրև մի կողմից հայերի և ասորիների, մյուս կողմից հույների և լատինների միջև բորբոքված տոմարական վեճի ժամանակաշրջան: Առաջին անգամ Հայոց ԾԾԱ թվականի(=1102) կողմերի միջև վեճի առարկա դարձավ Ծռազատկի խնդիրը, որը մի քանի հարյուրամյակ շարունակ միմեանց դեմ էր հանում հակադիր կողմերում դիրքավորված տոմարագետ վարդապետներին[15]: Խաչակիրների, հատկապես Սիցիլիայի նորմանների դեմ մղված պայքարն ավարտվեց Դեաբոլի հաշտության պայմանագրով (1108), որով ծովափնյա Կիլիկիայի տարածքները կրկին մտնում էին բյուզանդական ազդեցության գոտու մեջ: Հայոց եկեղեցու նկատմամբ Ալեքս Ա Կոմնենոսի քաղաքականության սպառիչ բնութագիրը գտնում ենք ԺԲ դարի 30-ական թթ. պատմագիր Մատթեոս Ուռհայեցու երկում. «...ի վերայ ազգիս Հայոց յոյժ ատեցող երեւեալ: Սա գործեաց գործ, որ ոչ էր ըստ կամացն Աստուծոյ. հրամայեաց երկրորդ մկրտութիւն առնել...»[16]: Ալեքս Ա Կոմնենոսի մահից (1118) մինչև ԺԲ դարի 30-ական թթ. Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության տեսադաշտից շարունակում էր հեռու մնալ Հյուսիսային Ասորիքում գտնվող Հայոց կաթողիկոսարանը:

Այս քաղաքական գծին հակառակ, Սելջուկները ավելի ու ավելի նպաստավոր պայմաններ էին փորձում ստեղծել Հայոց եկեղեցու գործունեության համար, հնարավորություն տալով Բարսեղ Անեցուն վերացնել Հոնիի հակաթոռ կաթողիկոսարանը, ամրապնդել եկեղեցական նվիրապետական կառույցը սելջուկ սուլթանության տարածքներում[17]:

ԺԲ դարի 30-ական թթ. բյուզանդական նվաճողական քաղաքականության հիմնական թիրախներից մեկը դարձավ Կիլիկիայի հայկական իշխանությունը: Հովհաննես Կոմնենոսը երկու անգամ իր բանակներով ներխուժեց Կիլիկիայի հայկական իշխանության տարածք և Հյուսիսային Ասորիք (1136-1138, 1142-1143): Բյուզանդական կայսրը իր բանակի ռազմական հաջողությունները ամրապնդում էր, Իսավրիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի գլխավոր քաղաքներից հեռացնելով լատին թեմակալ առաջնորդներին և այդ աթոռների վրա վերահաստատելով հույնօրթոդոքս եկեղեցու եպիսկոպոսներին: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Հովհաննես Բ Կոմնենոսի (1118-1143) իշխանության տարիներին Բյուզանդական կայսրությունը նկատելիորեն հրաժարվում է Հայոց եկեղեցու և ազգաբնակչության նկատմամբ բռնի ուժի քաղաքականությունից: Նրա մասին պատմիչը գրում է. «...սա եղեալ ընդունող ազգին Հայոց՝ և վերացոյց զցասումն անարժան մկրտութեանն...»[18]: Այս շրջանում Բյուզանդական կայսրությունն անմիջական հարաբերությունների մեջ մտավ նաև Հայոց եկեղեցու առաջնորդների հետ, որոնք տարածաշրջանում ձեռք էին բերել բավական մեծ հեղինակություն: Ըստ լատին և հայ-

կական սկզբնաղբյուրների, նրանք բավական ինտենսիվ փոխհարաբերություններ էին հաստատել կաթոլիկ եկեղեցու Մերձավոր Արևելքում հաստատված կառույցների հետ[16]: Հովհաննես Բ Կոմնենոսի գահակալման այս շրջանին է վերաբերում Ֆրանսիացի բյուզանդագետ Ժ.Դարուցեզի կողմից հայտնաբերված և Revue des Etudes Byzantin-ում (1990) հրապարակված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու թուղթը ուղղված Հովհաննես Բ Կոմնենոս Կայսրին: Ամենայն հավանականությամբ այս վավերագիրը գրվել է Հովհաննես Բ-ի առաջին կամ երկրորդ Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ռազմարշավներից մեկի ընթացքում և կաթողիկոսի կողմից անձամբ հանձնվել է կայսրին: Չնայած որ, ոչ այդ նամակի վերնագրում, ոչ էլ բնագրում չի հիշատակվում այդ պահին Հայոց կաթողիկոսական գահը զբաղեցնող Գրիգոր Գ կաթողիկոսի անունը, այնուամենայնիվ նամակի սկզբից պարզ է դառնում, որ կայսրը խնդրել է Հայոց եկեղեցու առաջնորդին բացատրություններ տալ Հավատս հանգանակի շուրջ և հույներին հուզող մի շարք ծիսադավանական խնդիրների մասին[17]:

Այդ խնդիրներից առաջինը Հայոց եկեղեցու Հավատո հանգանակն էր, դավանաբանության խոստովանությունը: Կաթողիկոսն իր նամակի սկզբում մանրամասնորեն անդրադառնում է Ս.Երրորդության անձերին (Հայր, Որդի, Ս.Հոգի), բնութագրում է նրանց ընկալումը Հայոց եկեղեցու ուղղափառության տեսանկյունից: Հավատո այս հանգանակը գրեթե չի տարբերվում օրթոդոքս եկեղեցու մոտեցումներից և հակադրվում է լատին աստվածաբանությանը՝ Filioque-ի մերժումով: Անդրադառնալով Ռևանի մարմնացմանը, կաթողիկոսը հավասարապես նզովում է և՛ Եվտիքեսին, և՛ Նեստորին: Նամակում խոսվում է նաև պատարագի գինու և Ս.Սեռունի մասին, բերվում է հայոց եկեղեցուն բնորոշ դավանաբանական բանաձևը. «τρεῖς ὑποστάσεις καὶ μίαν φύσιν»: Այս վավերագիրը իր քննարկած հարցերով նախորդում է 1165թ. սկսված հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին (1165-1178), որը բարձրակետն է հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունների:

1143թ. հետո մեծ տեղաշարժեր տեղի ունեցան Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում: Եդեսիայի կոմսության կործանումից հետո, 1150-ական թթ. հետո Հայոց կաթողիկոսարանը հաստատվեց Եփրատի ափին գտնվող Հռոմկլա ամրոցում, որը մտել էր Հսղեպի աթաբեկության տարածքների մեջ:

Հայոց կաթողիկոսարանը մեզ հետաքրքրող պատմաշրջանում հայերին միավորող համազգային միակ կազմակերպությունն էր, այն փաստորեն պետություն էր պետականությունը կորցրած ժողովրդի համար: Նրա իշխանության մյուս առանձնահատուկ կողմն էլ այն էր, որ այն տարածվում էր հայազգի բոլոր հավատացյալների վրա, որոնք բնակվում էին Մերձավոր Արևելքի բազմաթիվ պետություններում: Այդ է

պատճառը, որ Հովհաննես Բ-ի հետնորդը, Մանուել Ա Կոմնենոսը (1143-1180) սկսեց իրականացնել Հայոց եկեղեցու հետ միության տևական բանակցություններ: Կաթողիկոսարանի հիմնական խնդիրն էր եկեղեցական բանակցություններում ճեղքել Հայոց եկեղեցու մեկուսացումը, իսկ Բյուզանդականինն էր՝ կայսրության տարածքներում և Կիլիկիայում ապրող հայերի աջակցության ձեռք բերումը արտաքին և ներքին քաղաքական հարցերում:

Բանակցությունների սկիզբը թելադրված էր Բյուզանդակաս կայսրության նկրտումներով: Այդ մասին հետաքրքիր վկայություններ է պահպանել Ներսես Լամբրոնացու կազմված «Պատճառ խնդրոյ միաբանութեան» (ՊԽՄ) ժողովածուն, ուր հավաքված են Մանուել Ա Կոմնենոսի իշխանության դարաշրջանում Հայոց կաթողիկոսարանի և Բյուզանդական կայսրության միջև փոխանակված եկեղեցական բանակցությունների վավերագրերը: ՊԽՄ-ի առաջաբանում պատմվող իրադարձությունների ծավալման վայրը Կիլիկյան Հայաստանն էր, ուր երկպառակտչական պատերազմ էին վարում երկու հայազգի իշխաններ՝ Օշին Հեթումյանը և Թեոդորոս Բ Ռուբինյանը: Այս ոլորվագում ակնհայտ է եկեղեցու պատմաբան Ներսես Լամբրոնացու աչառու վերաբերմունքը Ռուբինյան իշխանական ընտանիքի նկատմամբ: Ելակետ ընդունելով Բյուզանդական կայսրությանը Օշինի Հեթումյանի և Թորոս Ռուբինյանի ստորակա դիտվելու հանգամանքը, Տարսոնի արքեպիսկոպոսը մեղադրում է երկրորդին, որ նա «թէկն ածէր ընդդէմ թագաւորին Հոռոմոց պէսպէս պատճառաւ, մոռացեալ գերդմնակուռ դաշինսն՝ որ ի միջի և հնազանդութիւն նորա» (ԹԸ, 1871, էջ 86), հակադրելով Թորոսի վարքագիծը Օշինի հավատարմությանը դեպի բյուզանդական կայսրությունը: Ըստ Ներսես Լամբրոնացու, երկու հայ իշխանների միջև ծագած պատերազմի հիմնական պատճառն Օշինի հավատարմությունն էր Բյուզանդական կայսրությանը:

Այդ հունասեր քաղաքականության գաղափարախոսական դիրքերի վրա է կանգնած նաև ՊԽՄ ժողովածոյի կազմող Ներսես Լամբրոնացին և նրան մոտ կանգնած հայ հոգևորականության այն շերտը, որը բյուզանդակաս եկեղեցու հետ միության կողմնակից էր:

Ըստ Ներսես Լամբրոնացու Մանուել Ա Կոմնենոսը և Բյուզանդակաս կայսրությունը, ԺԲ դարի 70-80-ական թթ. համաշխարհային քաղաքակրթության պահպանման հենասյունն ու ապավենն էր: ՊԽՄ ժողովածոյի վերջում Ներսես Լամբրոնացին ակնարկելով 1180-1183 թթ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին. Ալեքս Բ Կոմնենոսի (1180-1183) գահակալմանը, Մանուել Ա-ի դստեր և փեսայի խռովությանը, Անդրոնիկոս Ա Կոմնենոսի (1183-1185) խարդավանքներին, Տարսոնի արքեպիսկոպոսը դրանք մատուցում է որպես աշխարհի կործանման բացահայտ նշան: Նա Բյուզանդական կայսրութ-

յան քաղաքական կյանքի վայրիվերումների հետ է կապում ողջ աշխարհի կացությունը. «Արդ ընդ սեանն տատանել՝ շարժի և աշխարհ ընդ ամենայն կողմանս սովով եւ սրածութեամբ եւ սասանութեամբ, որպէս ասաց Քրիստոս յաստուածապատում աւետարանութեանն յաղագս կատարածին» (ԹՌ, 1871, էջ 86): Այդ միտումը ընթերցողի մեջ սերմանելու և գաղափարը ՊԽՄ-ի վերջնական ակորդ դարձնելու համար հեղինակի գրչի տակ քիչ դեր չի խաղում Միրիոկեֆալեի ճակատամարտում Բյուզանդական բանակի պարտությունն ծանուցում դիտելով 1176 թ. ապրիլի 11-ի արեգակի խավարումը:

Ուրեմն՝ Ներսես Լամբրոնացու քաղաքական հավատամքի համաձայն պետք էր ամեն կերպ աջակցել Բյուզանդական կայսրության հզորության ամրապնդմանը և դատապարտել ու խանգարել հակաբյուզանդական ուժերի գործունեությանը: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ ՊԽՄ ժողովածոյի կազմողը, որը դեռ 1182-1183 թթ. եկեղեցական միության հայ-բյուզանդական բանակցությունների հետևողական կողմնակից էր, 1196 թ. Կ.Պոլիս այցելելուց հետո, խոր հիասթափություն է ապրում, տեսնելով Բյուզանդական կայսերական եկեղեցու և արքունիքի իներտ վերաբերմունքը հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների շարունակման վերաբերմամբ:

Մյուս կողմից, Հայ-բյուզանդական փոխհարաբերությունների նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքորոշման մասին մեր տեսակետները ամբողջական չեն լինի, եթե անտեսենք Հյուսիսային Հայաստանի վարդապետների դիրքորոշումը: Նրանք հայ-բյուզանդական բանակցությունների ողջ ընթացքում ընտրել էին երկխոսությունը ընդհատելու և բոյկոտելու քաղաքականություն: Այդ քաղաքականությունը ուղիղ համեմատական կապի մեջ պետք է տեսնել Վրաց պետության վարած կրոնական քաղաքականության նկատմամբ, որի հետևանքով վերամկրտվում էին Հայոց եկեղեցու ներկայացուցիչները, քաղկեդոնականների ձեռքն էին անցնում Հայոց եկեղեցիներն ու վանքերը: Այդ է պատճառը, որ բյուզանդական եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը տարբեր էր Կիլիկիայում և ամբողջովին հակառակ Հյուսիս-արևելյան Հայաստանում: Գրիգոր Տուտեորդին և նրան ժամանակակից հյուսիս-արևելյան մյուս վարդապետները փորձում էին ամեն կերպ խոչնդոտել հայ-բյուզանդական եկեղեցիների միության կիլիկյան վարդապետների ծրագրին: Նրանք իրենց նամակներով ժամանակ առ ժամանակ սթափության կոչեր էին անում Հռոմկլայի կաթողիկոսներին և Կիլիկիայի Ռուբինյան իշխանության ղեկավարներին:

Կոմնենոսների հարստության վերջին տարիներին քաղաքական անկայունության հետևանքով Բյուզանդական կայսրությունում կրկին հալածանքներ սկսվեցին Հայոց եկեղեցու ներկայացուցիչների դեմ: Այդ հալածանքների թիրախ դարձան Փիլիպուպոլսի շրջանի հայկական հա-

մայնքները: Հակահայկական պրոպագանդայի արտահայտություններից մեկն էլ Անդրոնիկոս Կոմնենոսի (1183-1185) կողմից Թեոդոսիոս Բոլաղիոտես (1179-1183) պատրիարքի գահընկեցությունն էր, որին ներկայացված մեղադրանքներից մեկն էլ ըստ բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսի՝ պատրիարքի հայկական ծագումն էր: Իհարկե այս գարաշրջանում Հայոց եկեղեցին բավական ամուր կարգավիճակ էր ձեռք բերել Բալկաններում: Ըստ Վարդան Արևելցու այստեղ գործում էր Հայոց եկեղեցուն ենթակա երեք եպիսկոպոսական աթոռ[21]: Այս եկեղեցական կազմակերպությունը լուծարելու միտում ուներ Իսահակ Անգելոսի (1185-1195) կրոնական քաղաքականությունը, որի հիմնական դրույթները շարադրված են Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին ուղարկված նամակում[22]: Այստեղ կայսրն արդարացնում է Բյուզանդական եկեղեցու որդեգրած կրկնամկրտությունների սլլակտիկան: Հենց այս քաղաքականության նկատմամբ դժգոհությունն էր, որ Գ խաչակրաց ռազմարշավի ժամանակ Փիլիպուպոլսի հայկական բնակչությունը ապստամբեց Բյուզանդական կայսրության դեմ և քաղաքն հանձնեց գերմանական խաչակրաց բանակին[23]: Ահա Կոմնենոսների կայսրության այս վերջին իրադարձությունների լույսի ներքո էլ ԺԳ դարի սկզբի բյուզանդական մատենագիրները և հատկապես Նիկետաս Խոնիատեսը, որը այդ տարիներին Փիլիպուպոլսի քաղաքապետն էր, անդրադառնում են Հայոց եկեղեցու և հայ ազգաբնակչության նկատմամբ կայսրության վարած քաղաքականությանը:

AZAT BOZOYAN

ARMENIAN CHURCH AND BYZANTINE EMPIRE IN THE 11-12 CENTURES

The article include some questions on Armenian-Byzantine relations in the epoch of the Comnenoi temps and duscussed some Byzantinc document.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. G.Ostrogorsky, History of the Byzantine State, Oxford, 1956, p. 303-309.
2. G.Ostrogorsky, History..., p. 315-324; Ф.Успенский, История Византийской империи. Отдел VI. Комнины, т.4, М. 2002, с. 112-113.
3. G.Ostrogorsky, History..., p. 320; Ф.Успенский, Указ. соч., с. 146.
4. Տե՛ս այդ մասին G.Dcdeyan, Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 2, p. 733-735.
5. Այդ մասին տե՛ս G.Dedeyan, Les Armeniens..., t. I, p. 249-252.
6. Տե՛ս Papadopulos-Kerameus, Ἀνάλεκτα Ἱεροσολυμικῆς σταχυλογίας, I, SPb. 1891, p. 116-123; H.-G. Beck, Kirche und theoilogiche Litcrature im Byzantinischen Reich, München, 1959, p. 610.

7. ԺԱ դարի Բ կեսի եկեղեցա-դավանական վեճի էությանը անդրադարձել են Նիկոս Գարսոյանը (N.G.Garssoïan, The Problem of Armenian Integration into the Byzantine Empire.- in: Studies of the Internal Diaspora of the Byzantine Empire, Washington, 1998, p. 112-122) և Ժան Գույարը (J.Gouillard, Gagik II défenseur de la foi Arménienne. MT, 7, 399-418):

8. Տե՛ս Gouillard J.. Le synodikon de l'orthodoxie.- TM, 2, 1967, p. 204-205; Garsoïan N., L'abjuration du moine Nil de Calabre.- BS, XXV/1, 1974, 12-27; Mullett M., Theophylakt of Oehrid. reading the letters of a byzantine archbishop, Birmingham Byzantine and Ottoman Monograph, 2, Aldershot, 1997, p. 88-89, 187, 240-241 Dedeyan G., Les armeniens..., t. 2, p. 735-736. ԺԱ-ԺԲ դդ. բյուզանդական սկզբնաղբյուրներից հիշատակելի են. Theophilakt d'Aehrida, Lettres, introd., texte, traduet, et notes par P.Gautier, CFHB, vol. XV/2, Thessalonique, 1986, p. 129; Anne Comnene. Alexiade, edit. et trad. B. Leib, t.II, p. 188-189.

9. Տե՛ս Mullet, Theophylact, pp. 88-89; Ducellier A., Kaplan M., Ferluga J., Arrignon J.-P., Carile A., Balard M., Byzanee et monde orthodoxe, A.Colin, Paris, 1986, p. 248-249; Vryonis S., Byznatine Images of the Armenians.- in: R.Hovannisian (dir.), The Armenian Image in History and Litterature, University of California, Los Angeles, 1981, p. 65-81; Zekyan L., The Armenian Community of Philippopolis and the Bishop Ioannes Athmanos, Imperial Legate to Cilicia.- in: G.Kara (dir.), Between the Danube and Caucasus, p.367-368; Dagron G., Minorités ethniqiues et religieuse dans l'Orient hyzantin à la fin du Xe et au XIe siecle: L'immigration syrienne.- in: TM, 6, 1976, p. 200-204; Ա.Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը, Եր., 1988, էջ 20-21; Սկզբնաղբյուրների մեջ առանձնանում է. Anne Comnene, Alexiade, t. II, p. 179-181, հմմտ. Анна Комнина, Алексиада, с. 396-398.

10. Այդ քաղաքականությունը երկուստեք ահագնացող չափերի էր հասել Ժ դարում. Անանիա Սոկացի կաթողիկոսի (941-965 թ.) իշխանության տարիներին (տես Գ.Տեր-Սիրտչյան, Հայագիտական Ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատ. պրոֆ. Պ.Հ.Հակոբյանի, 1998, էջ 77 նն.):

11. Տե՛ս Anne Comnene, t. II, p. 181-185; 218-223; Theophilaete, Lettres. pp. 178-179, 336-337, 338-339; հմմտ. Chalandon F., Les Comenes, t. I, pp. 317-319; Mullett, Theophilact. p. 241; Dedeyan G., Les Armeniens..., t. 2, p. 739-740:

12. Auge, Politique religieuse...; Garsoïan N., The problem of Armenian Integration into the Byzantine Empire.- in: H.Ahrweiler and A.E.Laiou (dir.), Studies of the Internal Diaspora of the Byzantine Empire, Washington, D.C., 1998, pp. 76-77.

13. Տե՛ս PG, t. 139, 140; հմմտ. H.-G. Beck, Kirche, S. 665-664.

14. Ὁ ἐν Κωνσταντινουπόλει Ἑλληνικὸς Φιλολογικὸς Σύλλογος. Ἀνέκδοτα ἑλληνικὰ συγγράμματα ἔγγραφά τε καὶ ἄλλα κείμενα κατ᾽ ἐκλογὴν συλλεγέντα ἐκ τῶν ἐν τῇ „Μαυρογορδατέω Βιβλιοθήκης„ ἀναγραφομένων χειρογράφων καὶ νῦν πρῶτον ἐκδιδόμενα ὑπὸ Παπαδοπούλου τοῦ Κεραμέως, Ἐν Κωνσταντινουπόλει, 1884, σελ. 59-63; Հայերեն թարգմանությունը տե՛ս Հր.Բարթիկյան, Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային.- Էջմիածին, 1967, 4, էջ 54, հմմտ. հայ պատմագրության հետ. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 133:

14. Այս խնդրին առաջին անգամ անդրադառնում է Գրիգոր Բ Վլայասերը «Վասն Զատկին մոլորութեանն» ճառում: Այս վավերագրի բնագրական զուգահեռների մասին տե՛ս Օղլուգեան Ա., Մատենագրական հետազոտություններ Մովսէս վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ, Էջմիածին 2001, էջ 105-109:
15. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 345.
16. Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Բոզոյան Ա., «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո.- Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000, էջ 80-86:
17. Մատթեոս, էջ 346:
18. Տե՛ս Dédeyan G., Le rôle complementaire des frères Pahlawuni Grigor III. Catholicos, et Saint Nerses Snorhali. coadjuteur, dans rapprochement avec les Latins, à l'epoque de la chute d'Edesse (v.1139 – v.1150).- in REArm. NS. t. XXIII, 1992, p. 237-252.
19. Darrouzès J., Trois doeuments de la controverse greco-armenicnne.- Revue des Etudes Byzantines, 48, 1990, p. 94-97; 101-102; 131-145.
20. Տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ 1862, էջ 133-134:
21. Տե՛ս Հ.Բարթիկյան, Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային.- Էջմիածին, 1967, թ. 4, էջ 50-55 (վերահրատ տե՛ս Հ.Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հտ. Ա, էջ 181-186):
22. Տե՛ս Ա.Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178), Եր. 1995, էջ216-220: